ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ թիվ 691-Ա, 692-Ա, 693-Ա, 694-Ա, 695-Ա, 697-Ա, 698-Ա, 699-Ա և 700-Ա որոշումների վերաբերյալ

1. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 693-Ա որոշման մեջ հղում կատարված չէ ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1328-Ն որոշման 1-ին կետին, որով սահմանվում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի ուժով անհատույց տրամադրվող անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսի առավելագույն չափը:
2. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 694-Ա որոշման 3-րդ կետով փոխվել է համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, «այլ հող» գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը և այն ընդգրկվել է «բնակելի կառուցապատման» գործառնական նշանակության հողերի ցանկում: Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացումը և հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 828-Ն որոշմամբ:
3. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 699-Ա որոշմամբ փոխվել է Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, «այլ հող» գործառնական նշանակության 0.01125 հա հողամասի գործառնական նշանակությունը: Քանի որ ՀՀ

Շիրակի մարզի Երազգավորս համայնքը ունի ունի հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (տարածական պլանավորման փաստաթղթեր, գլխավոր հատակագիծ), հետևաբար հողամասի գործառնական նշանակություն փոփոխելիս պետք է ղեկավարվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգով»։

4. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ թիվ 691-Ա, 692-Ա, 695-Ա, 697-Ա, 698-Ա և 700-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒԻԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 2921/22 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի N 690-Ա – N 700-Ա և 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 701-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. N 690-Ա որոշման վերնագրում «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերն ավելորդ են։

2. N 691-Ա որոշման 3-րդ կետը, N 692-Ա որոշման 2-րդ կետը, N 694-Ա որոշման 4-րդ կետը և N 695-Ա որոշման 2-րդ կետը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին։

3. N 694-Ա որոշման նախաբանում համայնքի անվանումը թերի է գրառված, բացի այդ որոշման 6-րդ կետում անվավեր ճանաչված որոշման ամսաթիվը գրառված չէ։

4. N 697-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին։

5. N 698–Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը որոշմանը կից ներկայացված չէ։

6. N 701-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ թիվ 691-Ա, 692-Ա, 694-Ա, 695-Ա և 699-Ա որոշումների վերաբերյալ

Թիվ 694-Ա որոշման 3-րդ կետով փոխվել է համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, «այլ հող» գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը և այն ընդգրկվել է «բնակելի կառուցապատման» գործառնական նշանակության հողերի ցանկում: Քանի որ Ախուրյան համայնքի Կամո բնակավայրը ընդգրկված է «Շիրակ-2»-ի մեջ, հետևաբար անհրաժեշտ է հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի № 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման» կարգի 24-րդ կետով:

Թիվ 699-Ա որոշման 1-ին կետով փոխվել է համայնքային սեփականություն համարվող հողամասից առանձնացվող հատվածի գործառնական նշանակությունը: Քանի որ ՀՀ Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրը ընդգրկված է «Շիրակ-4»-ի մեջ, ունի հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (տարածական պլանավորման փաստաթղթեր, գլխավոր հատակագիծ), հետևաբար հողամասի գուրծառնական նշանակություն փոփոխելիս պետք է ղեկավարվել 2011 թվականի դեկտեմբերի 29-ի № 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման» կարգի 24-րդ կետով:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ թիվ 691-Ա, 692-Ա և 695-Ա որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

ԽՍ. ԽՆԶՐՑՅԱՆ

Կատարող Արմենուհի Մկրտչյան